# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԱՍՀՆ-ԱՌԱՊՁԲ-2022/1

Ք. Երևան 01.12.2022թ.

«ՕՆԼԱՅՆ ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ» ՍՊԸ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, 0036, Աջափնյակ, Բաշինջաղյան փ., շ. 180, բն. 11, ՀՎՀՀ 01287937), ի դեմս նրա տնօրեն Նարեկ Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, այսուհետ «Վաճառող», և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հասցե՝ ք. Երևան Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, ՀՎՀՀ 01506515) ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Սամվել Մուրադյանի, ով գործում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/ հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողն իրավունք է վերապահում Գնորդին, ապրանքներ ձեռքբերելու վճարման հետաձգման պայմանով և Գնորդի պահանջով, իրականացնել գնված ապրանքների առաքում Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով :

## 2. Պատվերի ձևավորումը և վճարումը

2.1 Գնորդն ապրանքների ընտրությունը կատարում է, իսկ Վաճառողը Գնորդին ապրանքներն առաքում է www.supermarket.am ինտերնետ կայքում վաճառվող տեսականու համաձայն՝ ըստ պատվերների, որոնց յուրաքանչյուրի ընդհանուր արժեքը չի կարող գերազանցել 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամը:

2.2 Առաքվող ապրանքների քանակը և տեսականին, ինչպես նաև առաքման հասցեն հաստատվում են Գնորդի կողմից ստորագրված գրավոր պատվերով կամ Պայմանագրում նշված էլ. հասցեից Վաճառողին ուղարկված պատվերով, հայտով կամ հեռախոսի միջոցով :

2.3 Առաքումը իրականացվում է միայն Երևանի տարածքում:

2.4 Գնորդը վճարում է առաքված ապրանքի դիմաց անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի՝ Պայմանագրի 5 կետում նշված բանկային հաշվին փոխանցելու միջոցով, հաշիվը և հանձնման-ընդունման արձանագրությունը ու ակտը ստանալուց և հաստատելուց հետո երեսուն /30/ աշխատանքային օրվա ընթացքում:

2.5 Գնորդը կարող է կրկին ապրանք պատվիրել միայն նախորդ պատվերի գումարն ամբողջությամբ վճարված լինելու (չկատարված դրամական արտավորություն չունենալու) դեպքում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

*3.1 Գնորդը պարտավոր է*

3.1.1 Գնորդը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները առաքվող ապրանքները ընդունելու համար, այդ թվում ստորագրել համապատասխան հանձնման ընդունման ակտ կամ կատարել ապրանքների ընդունումը հավաստող մակագրություն Վաճառողի կողմից ներկայացված փաստաթղթ/եր/ում:

3.1.2 Գնորդը պարտավորվում է բարեխղճորեն կատարել Պայմանագրով իր վրա դրված իրավունքները և պարտավորությունները:

3.1.3 Վաճառողի կողմից պատվիրված ապրանքները սահմանված կարգով առաքվելու դեպքում Գնորդը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ապրանքներն ընդունելու համար:

3.1.4 Եթե Գնորդն ավելի քան երկու անգամ տեղում չի ընդունում առաքված ապրանքները, ապա յուրաքանչյուր հաջորդ խախտման համար Վաճառողին վճարում է տուգանք Պատվերի ընդհանուր արժեքի 50 /հիսուն/ տոկոսի չափով:

*3.2 Վաճառողը պարտավոր է*

3.2.1 Վաճառողը պարտավորվում է բարեխղճորեն կատարել Պայմանագրով իր վրա դրված իրավունքները և պարտավորությունները:

3.2.2 Վաճառողը պարտավորվում է պատշաճ որակով և տեխնիկապես հնարավոր ամենակարճ ժամկետներում կատարել Գնորդի պատվերը:

*3.3 Գնորդն իրավունք ունի*

3.3.1 Եթե ապրանքների ընդունման ժամանակ հայտնաբերվում են թերություններ, ապա Գնորդն իրավունք ունի պահանջել Վաճառողից վերացնել այդ թերությունները վերջինիս հաշվին և չընդունել ապրանքները մինչև այդ թերությունների վերացումը:

3.3.2 Գնորդն իրավունք ունի Վաճառողի կողմից ներկայացված հաշիվների, /այդ թվում էլեկտրոնային/ առաքված ապրանքների փաստի, քանական, որակական կամ այլ հատկությունների կամ Պայմանագրի որևէ կետի խախտման վերաբերյալ հղում կարող է անել միայն տասնհինգօրյա ժամկետում այն պահից սկսած, երբ համապատասխան հարկային հաշիվը դուրս է գրվել /այդ թվում էլեկտրոնային/կամ ապրանքները առաքվել կամ փաստացի հանձնվել է Գնորդին, այդ թվում տասնհինգ օրյա ժամկետում՝ սկսած այն պահից, երբ իմացել է Վաճառողի կողմից Պայմանագրի որևէ կետի խախտման վերաբերյալ կամ չի իմացել, սակայն պարտավոր էր: Նշված ժամկետի ավարտից հետո առարկությունների բացակայությունը վկայում է Վաճառողի կողմից իր պարտավորությունների ամբողջական կատարման մասին, որը հավասարեցվում է Կողմերի միջև պատշաճ ձևակերպված հանձնման ընդունման ակտի առկայությանը և Գնորդի կողմից գնված /առաքված/ ապրանքների համար վճարման անհերքելի

հիմք է հանդիսանում:

3.3.3 եթե Վաճառողը Գնորդին հանձնել է որոշվածից պակաս քանակի ապրանք, պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը կամ հրաժարվելու թերի մատակարարված ապրանքից կամ դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը:

*3.4 Վաճառողն իրավունք ունի*

3.4.1 Վաճառողի հանդեպ ժամկետանց դրամական պարտավորություն ունենալու դեպքում Վաճառողն իրավունք ունի պահանջելու Գնորդից վճարել տույժ ժամկետանց գումարի 0,13 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար:

**4. Պայմանագրի ժամկետը, հավելյալ դրույթներ**

4.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2022թ.:

4.2Այն դեպքում, երբ այմանագրի գործողության ժամկետի ավարտից մեկ ամիս առաջ կողմերից որևէ մեկը չի ծանուցում մյուս կողմին պայմանագրի լուծման իր մտադրության մասին, ապա պ այմանագիրը համարվում է երկարացված նույն ժամկետով և միևնույն պայմաններով:

4.3 Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Կողմերը սույնով համաձայնվում են, որ սույն պայմանագրից բխող բոլոր դատական գործերն ընդդատյա են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին (Տարածքային ընդդատության համաձայնություն):

4.4 Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին տեղեկացնելով մյուս կողմին Պայմանագրի 5 կետում նշված որևէ հասցեով: Այդ դեպքում Պայմանագրի գործողությունը համարվում է դադարեցված Կողմի ծանուցումը ստանալու պահից:

4.5 Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

| | | |
|---|---|---|
| Գնորդի Հեռախոսային | Գնորդի էլեկտրոնային | Գնորդի կողմից լիազորված անձանց |

| համարներ | հասցեներ | Ա.Ա.Հ<br>Անձնագրային տվյալներ/բացի տնօրենից/ |
|---|---|---|
| 094848055 | laura.harutyunyan@mlsa.am | Լաուրա Հարությունյան, նույն. քարտ 008608614 |

**5.** Կողմերի տվյալները

| Վաճառող | Գնորդ |
|---|---|
| «ՕՆԼԱՅՆ ՍՈՒՊԵՐՄԱՐԿԵՏ» ՍՊԸ | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, |
| Իրավ. Հասցե՝ ՀՀ, Երևան, 0036, Աջափնյակ, Բաշինջաղյան փ., շ. 180, բն. 11 | Իրավ.Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, |
| ՀՎՀՀ՝ 01287937 | ՀՎՀՀ՝ 01506515 |
| Բանկ՝ Էյչ-Էս-Բի-Սի ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ | Կենտրոնական գանձապետարան |
| Հ/Հ՝ 217003199361003 | Հ/Հ՝ 900011019321 |
| Հեռախոս՝ 0037411555555 | |
| Տնօրեն՝ Նարեկ Գոդինյան | Գլխավոր քարտուղար՝ Սամվել Սուրադյան |
| Կ.Տ. | Կ.Տ. |